

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. Երևան  
Ժ.11:00

23 հունիսի 2010թ.

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 41 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գ. Բաղդասարյանը:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքում Մխիթար Հերացու անվամբ հրապարակ անվանակոչելու մասին:
3. Երևան քաղաքի հ.111 հանրակրթական միջնակարգ դպրոցը անվանակոչելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ** – Օրակարգի հաստատման մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի 23.06.2010թ. արտահերթ նիստի օրակարգը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 41  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքում Մխիթար Հերացու անվամբ հրապարակ անվանակոչելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևան քաղաքի Շարիմանյան և Հերացու փողոցների հատման մասում ձևավորված հրապարակն անվանակոչել բժշկապետ Մխիթար Հերացու անվամբ՝ «Մխիթար Հերացու անվան հրապարակ»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 41  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

**3. ԼՍԵՑԻՆ** – Երևան քաղաքի հ.111 հանրակրթական միջնակարգ դպրոցը անվանակոչելու մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Երևանի հ. 111 հանրակրթական միջնակարգ դպրոցը անվանակոչել Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Ջիվան Զավենի Աբրահամյանի անվամբ:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 41  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՂԵՏ**

**Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**